§ 48. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները՝ վարչական կազմակերպութեան, գործավարութեան եղանակի, նախահաշիւ և հաշիւներ կազմելու, հաշուեպահութեան, ընդհանուր ժողովներ կայացնելու, պարապմունքների շրջանը և նոցա նիւթերը որոշելու վերաբերութեամբ, գործում են Խորհրդից տուած առանձին հրահանգի ճիշտ հիման վերայ (§ 38 և բ. բաժանումն 44-դ §-ի)։

§ 49. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները իրեանց կարգադրութեան ներքոյ գտնուող գումարներից հարկաւոր մասը թողնում են ընթացիկ ծախսերի համար, նախահաշուի որոշման համաձայն, իսկ մնացորդը առանց յետաձգութեան ուղարկում են Խորհրդին։

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽԱՓԱՆՈՒՄՆ

§ 50. Եթէ որ և է պատճառով Ընկերութիւնը դադարեցնէ իւր գոյութիւնը, Ընկերութեան բոլոր մնացած դրամագլուխն ու կայքը գործ են դրվում ազգօգուտ գործերի համար, Ընկերութեան բոլոր անդամների երկու երրորդական ձայնի համաձայն (§ 45)։



## ՓՈՍՏ

Ամենայն տեսակ թղթակցութիւնների յանձնելն ու ստանալը, նոյնպէս և փոստային նամակադրոշմների, դրոշմաւոր ծրարների ու բաց նամակների բլանկների վաճառումը կատարւում է նամակատանը առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամը։

Հասարակ և պատուիրած նամակները բացի վերոյիշեալ ժամերից ընդունւում են նաև երեկոյեան 5—7 ժամը։ Նոյն ժամերին վաճառւում են նոյնպէս նամակադրոշմներ, դրոշմաւոր ծրարներ ու բաց նամակի բլանկներ։

Փոստատունը բաց է առաւօտեան 8 ժամից մինչև 11 ժամը կիրակի և հետևեալ տօն օրերին.—Քրիստոսի քառասնօրեայ Գալստեան, ս. Աստուածածնի աւետման, Զատկի երրորդ օրը, Յիսուսի Համբարձման, Պայծառակերպութեան, ս. Աստուածածնի ծննդեան և վերափոխման, ս. Խաչի վերացման, ս. Աստուածածնի Ընծայման ի տաճարն և Քրիստոսի ծննդեան երրորդ օրը։

Իսկ փոստատունը միանգամայն փակ է լինում՝ կայսեր եւ կայսրուհու անուանակոչութեան տօներին, Նոր տարուն Քրիստոսի ծննդեան օրը, Զատկի առաջին և երկրորդ օրերը, ս. Հոգու գալստեան օրը և Ջրօրհնէքին։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԺԷՔԸ

1. փակած հասարակ նամակն արժէ 7 կ. իւրաքանչիւր լոտը։ Եթէ մի լոտից աւելի է նամակը, իսկ վրէն կպցրած է 7 կոպէկանոց դրոշմ, ստացողից պահանջւում է մնացած կշռի կրկնապատիկ արժէքը։ Առանց դրոշմի կամ 7 կոպէկից պակաս դրոշմով նամակ չի ուղարկւում, բացի արտասահմանից, ուր ստացողից պահանջւում է կրկին արժէքը։ Փակ նամակի ամենամեծ կշիռը 5 ֆունտ է կամ 160 լոտ։

2. փակ պատուիրած նամակ։ Բացի կշռի համեմատ 7-ական կոպէկ վճարից առնւում է նաև 7 կոպէկ և կորցնելու դէպքում տրւում է ուղարկողին 10 ռուբլի վարձատրութիւն։ Այդպիսի նամակի հասցէի երեսին պէտք է գրած լինի «պատուիրած»։ Պատուիրած նամակի համար փոստային վարչութիւնից տրւում է ապահովագիր։ Պատուիրած նամակը կարելի է նաև ձգել փոստարկղի մէջ, սակայն այդ դէպքում



Գաբրիէլ Սունդուկեան



Ղազարոս Աղայեան

Փոստ-հեռագրական Վարչութիւնը պատասխանատու չէ նամակի կորստեան համար, թէպէտև նա կուղարկէ պատուիրած նամակի համար սահմանուած կարգով։ Արգելուած է փող ուղարկել թէ հասարակ և թէ պատուիրած նամակներով. այդպիսի ճանապարհով ուղարկուած դրամները գրաւում են գանձարանի կողմից։

Ծանօթ. Իրաւունք չկայ փակ նամակ դնել ծրարների մէջ (посылокъ), այդպիսի նամակների լոտին 1 ռուբլի տուգանք է վերցնում։

3. Բաց նամակը արժէ 3 կոպէկ, պատասխանի վճարով 6 կոպէկ։ Կարելի է ամեն լեզւով գրել, նաև թւանշաններով ու մատիտով։ Այդպիսի նամակի վրայ բան կապել կամ կպցնել թոյլ չէ տրւում։

4. Փաթեթաւոր թղթակցութիւն։ Փաթեթով բաց, կամ չկպցրած ծրարներով թոյլ է տրւած ուղարկել—գործնական թղթեր, ապրանքների նմուշներ և այլ և այլ տպագիր գործեր։ Հասարակ փաթեթներից առնւում է իւրաքանչիւր 4 լոտին 2 կոպէկ, իսկ պատուիրածի համար, բացի դրանից, նաև 7 կոպէկ։ Փաթեթների մէջ չպէտք է դնել նամակ կամ դրա յատկութիւն ունեցող ձեռագիրներ, ինչպէս նաև դրամ, և պէտք է այնպէս լինի յարմարեցրած, որ հեշտութեամբ կարելի լինի ստուգել։ Ամենամեծ չափը 4 ֆունտ է (128 լոտ)։

Գործնական թղթեր համարւում են՝ ամեն տեսակ դատաստանական թղթեր, նոտարական և սոյնանման արձանագրութիւններ, հաշիւներ, հրդէհից ապահովող ընկերութիւնների այլ և այլ փաստաթղթեր, ընտանեկան արձանագրութիւնների պատճէններ և քաղւածքներ, երաժշտական ձեռագիր խազեր, առանձին ձեռագիր աշխատութիւններ և այլն։

Ապրանքների նմուշները պէտք է այնպիսի առարկաներ լինեն, որոնք վաճառւելու դէպքում արժէք չունենան։ Ապրանքների նմուշների վրայ թոյլ է տրւած ձեռագիր նկատմունքներ անել ապրանքի կշռի, չափի, ծաւալի և քանակութեան մասին, կամ այնպիսի ցուցմունքներ, որոնք անհրաժեշտ են ապրանքի ծագումն ու տեսակը որոշելու համար։

Տպագիր երկասիրութիւններ համարւում են՝ լրագիրներ, բրօշիւրներ, գրքեր, երաժշտական խազեր, հասցէի քարտեր, տպագրւող երկասիրութեանց սրբագրութեան թերթեր իր իսկական ձեռագրով կամ առանց նրան, նկարներ, լուսանկարներ, աշխարհագրական քարտէսներ, և առհասարակ ամենատեսակ տպագիր օրինակներ՝ թղթի, մագա-



ղաթի կամ ստւարաթղթի վրայ, տպւած տպագրութեան, վիմագրութեան կամ այլ մեքենական եղանակով, բացի ձեռքի կամ գաղափարող մամուլի մէջ ձեռքով տպած իրերից։

## ԴՐԱՄԱԿԱՆ ԵՒ ԱՐԺԷՔԱՒՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաքման ծախքերը սոքա են.—1. կշիռ. իւրաքանչիւր լոտին 7 կոպէկ, 2. ապահովութիւն. որոշեալ գներով. 3. պատուիրելու ապահովագրով—7 կոպէկ։

Դրամական ծրարով ուղարկւում է անսահման քանակութեամբ գումար—թղթադրամ և ոսկեդրամ, պետական տոկոսաբեր թղթեր, բաժնէտոմսեր, տէրութիւնից թոյլատրած մասնաւոր ընկերութիւնների ու հաստատութիւնների բաժնէտոմսեր, կտրոններ ու տալոններ, մաքուր դրւագաւոր ու մուրհակի թղթեր, պարտադիր ապահովութեամբ իսկական գներից ոչ պակաս և ոչ աւելի կրկնապատիկ արժէքից։

Արժէքաւոր ծրարներով ուղարկւում է բացի վերոյիշեալ դրամներից (բայց 100 ռուբլուց ոչ աւելի) և թղթերից, նաև ամեն տեսակ արժէքաւոր թղթեր և առհասարակ այնպիսի առարկաներ, որոնք ուղարկողի (корреспондентъ) աչքում գին ունին. այսպիսի թղթերի ապահովութիւնը լինում է ուղարկողի բարենկատողութեամբ։ Այդպիսի ծրարներում կարելի է դնել բաց նամակներ, որոնք ապահովութեան չեն ենթարկւում։ Արժէքաւոր ծրարներին 15,000 ռուբլուց աւելի չի կարելի գին դնել և այն առանց կոպէկների։

Ապահովութեան տուրքը մինչև 600 ռուբլին 1|2 կոպէկ ռուբլուց, 600—1600 ռուբլին 1|4 կոպէկ, 1 ռ. 50 կ. յաւելւածով, 1600 ռուբլուց բարձր 1|8 կ. ռուբլուց, 3 ռ. 50 կ. յաւելւածով։

Դրամական ծրարը կաշէ կապոցով ուղարկելու համար առնւում է (բացի ապահովութեան տուրքից) կշռի համեմատ վարձ հեռաւորութեան նայելով, ինչպէս առնւում է ծանրոցի համար։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՐԴՒԱԾ ՎՃԱՐՈՎ (наложен. платежъ)

Եթէ ուղարկողը կամենում է իր ուղարկած իրերի դրամը ստանալ նրանից, ում որ ուղարկում է, նա կարող է այդ գումարը բարդել ուղարկած թղթակցութեան վրայ, այսինքն որոշել այն գինը, որ ստացողը պէտք է հատուցանէ իրան ուղարկած թղթակցութիւնը կամ

ծանրոցը ստանալիս։ Թոյլ է տրւած վճարը բարդել հետևեալ ներքին թղթակցութեանց վրայ (տեղական և օտարերկրեայ, բացի Ֆինլեանդիա ուղարկածից),—պատւիրած փակ նամակների, պատւիրած փաթեթաւոր թղթակցութիւնների կամ պատոցների, արժէքաւոր ծրարների և ծանրոցների (արժէքաւոր և չգնահատած)։

Ծանօթ. Բարդւած վճարով թղթակցութիւն ուղարկողը պարտաւոր է. ա) հասցէի երեսում գլխին ցոյց տալ բարդւած գումարը, գրելով տառերով ու թւերով մի և նոյն ժամանակ այս օրինակ. Բարդւած... ռուբլի վճարով. և բ) նոյն տեղ գրել իր անունն ու հասցէն (ումից է փողոց, տան համարը և բնակարանը)։

Մի օրինակ արժէքաւոր ծանրոցի հասցէի.

Դրամական.

Տասն ռուբլու (10).

Բարդւած քսան և հինգ (25) ռուբլի վճարով.

Ե ր և ա ն

Նորին . . .

Ա. Բ.-ին

Աստաֆեան փողոց № 0. բնակ. № 0.

Գ. Դ.-ից Տփխիս. Երևանեան հրապ. № 0. բնակ. № 0.

---

Բարդւած վճարի գումարը չպէտք է 100 ռուբլուց աւելի լինի։ Բարդւածվճարով թղթակցութեան համար ճանապարհածախք առնւում է ուղարկողից, բացի սովորական փոստային տուրքից, նաև երկու կոպէկ բարդւած վճարի իւրաքանչիւր ռուբլուց. իսկ երբ վճարը շատ քիչ է՝ 10 կ. առնւում է յանձնելու համար։

## ԾԱՆՐՈՑՆԵՐ

Իբրև ծանրոց կարելի է ուղարկել ամեն առարկաներ, բացի դըրամական և արժէքաւոր թղթերից, փակ նամակներից, վատ փակւած հեղուկից, և այն նիւթերից, որոնք կարող են վնասել ուղարկւելիք իրերին, օրինակ ուտելիքը և գինու դիւրաբռնկող իրերը։ Ծանրոցը լինում է գնահատւած և անարժէք։ Առաջին դէպքում պէտք է կազմը գրել վրան „գնահատւած" և մօտը կցել թէ քանի ամբողջ ռուբլու է ծանրոցը։ Ինչպէս գնահատւած, այնպէս և անարժէք ծան-



րոցի վրայ պէտք է ուղարկողի հասցէն լինի (անունը, ազգանունը և բնակութեան տեղը)։ Ծանրոցը պահանջւում է զետեղել արկղի կամ ձիւթապատառի մէջ և խաչաձև պինդ կապել պարանով։ Այն ծանրոցները, որոնց կշիռը 5 ֆունտից աւելի չէ, և որոնք ուղարկւում են երկաթուղու գծի վրայ գտնւած տեղերը, թոյլ է տրւած կարծր թղթի մէջ փակել և կամ ձիւթապաստառի փաթեթով ուղարկել։ Ուղարկողը կարող է ծանրոցը կնքել իր կնքով կողքերի կարերին, բայց պարանի ծայրերը պարտաւորապէս պէտք է կնքւին փոստային վարչութեան կնքով։ Ծանրոցի կշիռը 3 փթից աւելի չպէտք է լինի։ Ծանրոցի գնահատութիւնը 5000 ռուբլուց աւելի չպէտք է լինի։

Ծանրոցի ուղարկելու համար վերցնւում է հետևեալ տուրքը.— 1) ապահովութեան դրամական ծրարների համար որոշեալ գներով. 2) կշռի ա) այն ծանրոցներից, որոնք ուղարկւում են նոյն նահանգի սահմաններում, որտեղից ուղարկւում է ծանրոցը—իւրաքանչիւր ֆունտին վերցնւում է 5 կոպէկ, բ) այն ծանրոցներից, որոնք ուղարկւում են ուրիշ նահանգներ—առնւում է համաձայն հեռաւորութեան ուղարկւող նահանգի գլխաւոր քաղաքը, այս հաշւով.—

| | | |
|---|---|---|
| Մինչև 500 | վերստ տարածութեան համար | 5 կ. ֆունտից |
| 500—1000 | " " " | 10 " " |
| 1000—2000 | " " " | 20 " " |
| 2000—3000 | " " " | 30 " " |
| 3000—4000 | " " " | 40 " " |

և 3) ապահովատոմսի համար 5 կոպէկ։

Կշռի տուրքի ամենափոքր չափ նշանակած է 20 կոպէկ փոխանակ առաջւան 10 կոպէկի։

## ՉԸՀԱՍՑՐԱԾ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբ չէ գտնւում այն անձը, որի անունով թղթակցութիւնը ուղարկւած է, թղթակցութիւնը պահւում է Սիբիրում և Կովկասում 3 ամիս, իսկ կայսրութեան ուրիշ տեղերում—2 ամիս. իսկ „ցպահանջ" մակագրով թղթակցութիւնները ամեն տեղ պահւում են 6 ամիս, որից յետոյ յետ է դարձնւում և 3 ամիս էլ մնում է նոյնը յանձնած տեղը՝

Այսքան միջոցում ուղարկողը կարող է յետ ստանալ իր ուղարկած թղթակցութիւնը։

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ (Արտասահմանեան) ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Թղթակցութիւնների հասցէները պէտք է գրել Ֆրանսերէն. բայց փոստային վարչութիւնների կողմից կանոնաւոր առաքման համար երկիրը և տեղը, ուր ուղարկւում է, անհրաժեշտ է նշանակել նաև ռուսերէն։

Հասարակ փակ նամակներին պէտք է կպցնել իւրաքանչիւր գրամին (1 1/6 լոտ) փոստային առանձին նամականիշ 10 կոպէկանոց։ Կշիռը սահմանափակւած չէ։ Թոյլ է տրւած ինչպէս թերի վճարով, նոյնպէս և անվճար թղթակցութիւնները, այնպիսիները յանձնելու ժամանակ ստացողից առնւում է պատկանեալ վճարը կրկին չափով։

Բաց նամակները—իւրաքանչիւրը 4 կոպէկ, իսկ պատասխանի վճարով 8 կոպէկ։

Պատւիրած թղթակցութիւնները (նամակներ և փաթեթներ) ենթարկւում են ներքին թղթակցութեանց համար սահմանւած կանոններին՝ բայց առնւում է կշռի համեմատ հասարակ—միջազգային թղթակցութեան համար որոշած տուրք, այսինքն՝ իւրաքանչիւր 15 գրամմին (1 1/6 լոտին) 10 կոպէկ, և պատւիրելու համար 10 կոպ. (Նախկին 7 կոպէկի փոխարէն)

Ռուսաց և օտարազգի թղթադրամ և ամեն տեսակ դրամական թղթեր կարելի է ուղարկել արտասահման և ստանալ այնտեղից անսահման քանակութեամբ թէ հասարակ և թէ պատւիրած նամակներով։ Հասարակ և պատւիրած նամակներով փող ուղարկելու արգելքը միայն ներքին թղթատարութեան է վերաբերում, այսինքն կայսրութեան ներսը ուղարկելուն։

Դրամական կամ արժէքաւոր ծրարները ուղարկելու համար առնւում է տուրք՝ 1) կշռի համեմատ իւրաքանչիւր 15 գրամմին (1 1/6 լոտին) 10 կոպէկ, 2) ապահովութեան համար ներքին դրամական թղթակցութեանց համար սահմանած գներով և 3) պատւիրելու և ապահովատոմսի համար 10 կոպէկ։

Արժէքաւոր ծրարներով կարելի է ուղարկել—ռուսաց և օտարազգի դրամներ թղթադրամով (ռուսացը մինչև 1000 րուբլի)՝ ամեն տեսակ տոկոսաբեր թղթեր, մաքուր դրւագաւոր կամ



մուրհակի թղթեր, կտրօններ ու տալօններ, պարտադիր ապահովութեամբ իրանց իսկական գներով։

Ծրարներ ընդունւում են փոստատանը ներքին թղթակցութեանց գներով և կանոններով, միմիայն հասցէն Ֆրանսերէն է գրւում։ Անգլիական կողմերը այդպէս չէ ուղարկւում ծրարներ, բայց եթէ արկղներով և տակառիկներով։

Եւրոպական տէրութիւնները, Ասիական Տաճկաստան և Անգլիատանեան երկիրներն ուղարկւող ծրարներին և կապոցներին կցւում է հասցէաթերթիկներ և դէկլարասիօներ, իսկ դրամական թղթակցութիւններին, որոնք Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու Կանադա են ուղարկւում, նաև ստորագրւած հաշիւ, որ պէտք է վաւերացած լինի Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգների հիւպատոսի կողմից, եթէ միայն գումարը 100 դօլլարից աւելի է (118 ռ. 75 կ.) Գերմանիա կամ Աւստրո-Ունգարիա ուղարկւող չգնահատւած ծրարների համար, որոնք մինչև 5 կիլօգրամ են կշռում—բացի ներքին թղթակցութեանց գներից առնւում է նաև 26 կոպ., իսկ Դանիա կամ Շվէյցարիա ուղարկելիքներին՝ 42 կոպ.։



# ՀԵՌԱԳԻՐ

## ՆԵՐՔԻՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Հեռագրի վճարը կազմում է 1) հեռագրական տուրքը Եւրոպական և Ասիական Ռուսաստանի սահմաններում 15 կոպ. իսկ Ֆինլեանդիայի սահմաններում 12 1|2 կոպ., և 2) իւրաքանչիւր բառի առանձին տուրքը (Եւրոպ. և Ասիակ. Ռուսաստան բառին 5 կոպ.) Եւրոպականից Ասիակ. Ռուսաստան անցնող հեռագրին, կամ հակադարձ, բառին 10 կոպ. իսկ Ֆինլեանդիա բառին 2 1|2 կոպ.*

*Ուրեմն 10 բառով հեռագիրը Եւրոպական Ռուսաստանում արժէ — հեռագրին՝ 15 կ. և 10 բառին՝ 50 կոպ. ընդամենը 65 կոպէկ։*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Արտասահմանեան հեռագրի համար վճար է վերցնւում միայն բառերի թւի համեմատ:*

*Ռուս լեզւի հեռագիրը հաշւելիս բառի ամենամեծ երկայնութիւնը ընդունւած է 7 վանկ, այսինքն եթէ մի բառ 8 վանկ ունի՝ հաշւում է 2 բառ. իսկ օտար լեզուներով հեռագրի իւրաքանչիւր բառի երկայնութիւնը սահմանափակւում է 15 տառով, իսկ ոչ—Եւրոպական լեզուների համար՝ 10 տառ։ Կէտադրութեան նշանները հաշւի չեն առնւում։ Իւրաքանչիւր 5 թւանշան մի բառ է հաշւում, իսկ ոչ—Եւրոպական լեզուներում իւրաքանչիւր 3 թւանշան՝ մի բառ։ Թւերի մէջ մտնող կէտադրութեան նշանները իւրաքանչիւրը մի թւանշանի տեղ է հաշւում։ Իւրաքանչիւր ջնջած բառ երկու բառի տեղ է ընդունւում։*

*Միջազգային հեռագիրներում թոյլ է տրւած պայմանական հեռագրանշաններ (Ֆրանսիական լեզւով) և իւրաքանչիւր այդպիսի նշան ընդունւում է մի բառի տեղ։ Պայմանական նշանները սոքա են։*

P. P.—poste payée

Rp. D.—*վճարւած պայմանաժամով պատասխան.*

Ep.—*էստաֆէտի համար վճարւած.*

P. R.—*վճարւած պատւիրած փոստային առաքումն.*

St.—*վճարւած պաշտօնական հեռագիր.*



*Բաքուի երկաթուղու կայարանը ներսի կողմից*

R. R.—պատասխանին վճարուած.
Fs.—յանձնել յետ.
Ck.—ծանուցումն հասցնելու մասին.
Ts.—ստուգութիւնը մեզ մօտ է։

Լատինական տառերով գրուած հեռագիրներ ընդունւում են գոյութիւն ունեցող ամեն եւրոպական լեզուներով։ Ներքին հեռագիրներ կարելի է դարձնել օտար լեզուների միմիայն գլխաւոր կայարաններում։

*Պայմանաժամով* (срочный) *հեռագիրը* տրւում է ոչ հերթով, այլ իսկոյն կայարանին յանձնելուց յետոյ և պահանջւում է եռապատիկ վճար։

*Պատասխանը վճարուած հեռագիր*։ Սկզբից պատասխանի համար վճարուած հեռագրին առնւում է 10 բառի վճար, եթէ հեռագիր ուղարկողը չի որոշել, թէ քանի բառով կամենում է պատասխան ընդունել. եթէ նա որոշում է պատասխանի բառերի թիւը՝ պէտք է նշանակէ այդ թիւը հեռագրի մէջ։ Հեռագիրների վրայ դրւում է մակագիր այս ձևով.—Ներքին հեռագրի վրայ „պատասխանը վճարուած“, բառերի թիւը որոշած դէպքում «պատասխանը 15 վճարած“, իսկ միջազգային հեռագիրներում PR կամ RP'-15։ Պատասխանելու ամենամեծ միջոցը վեց շաբաթ է։

*Մի քանի հասցէով հեռագիր*։ Եթէ պահանջւում է, որ միևնոյն հեռագիրը այլ և այլ անձանց ուղարկւի այլ և այլ հասցէներով, դրա համար վերցնւում է լրացուցիչ վճար—իւրաքանչիւր հասցէի և հեռագրի իւրաքանչիւր 100 բառի համար 15 կոպէկ։

*Վերաստուգած հեռագիր*։ Եթէ ուղարկողը ցանկանում է որ նրա հեռագիրը, բառերի ապագայ չփոթութիւնից ազատ լինելու համար վերաստուգւի, հեռագրի վրայ մակագրւում է „վերաստուգութեան վճարով“ (Ts) և դրա համար վճարւում է հեռագրի արժէքի 1|4-ը։





# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐԻ,
## ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ․

*Խորհուրդի անդամների անունները*

1․ Քրիստափոր Աստնեանց (Նախագահ)
2․ Պօղոս Ղուկասեանց
3․ Պետրոս տէր-Մարկոսեանց
4․ Թոմաս Ամիրեանց
5․ Մկրտիչ Շահգելդանեանց
6․ Բողդան Դոլուխանեանց
7․ Եսայի Սախարեանց
8․ Աստուածատուր Գալստեանց (Ատենադպիր)

---

*Գ Լ Ո Ւ Խ Ա.*

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 1․ Լուսաւորութիւն և բարեգործութիւն տարածելու համար Ռուսաստանի հպատակ գտանուած Հայոց մէջ, առանց զանազանելու նոցա կոչումը և դաւանութիւնը, հիմնւում է Բագու քաղաքում Մարդասիրական Ընկերութիւն յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի։

§ 2․ Այս ընկերութեան գործողութեանց շրջանը սահմանափակւում է Ռուսաստանի սահմաններով։ Ընկերութեան՝ իւր գործունէութիւնը՝ Կայսրութեան սահմանից դուրս անցուցանել՝ արգելւում է։ Սորա վերայ դիտողութիւնը՝ գրուած է գլխաւորապէս Նահանգապետի վերայ, որի տեսչութեան մէջ գտնւում է ընկերութեան գործերի կառավարութիւնը։

§ 3․ Մարդասիրական Ընկերութիւնը՝ իւր տեղը գործերի կառավարութեան ունի Բագու քաղաքի մէջ։ Նիւթական միջոցների աճմանէն յետոյ, կառավարութիւնը ընկերութեան գործերի՝ կարող է կենդրոնանալ և Անդր-Կովկասեան երկրի մի այլ քաղաքի մէջ, եթէ միայն ընկերութեան անդամների մեծագոյն մասը յայտնէ առ այս իւր համաձայնութիւնը։

§ 4. Ընկերութիւնը՝ իւր սահմանադրութեան նպատակին համեմատ եղած ամենայն գործողութեանց մէջ գտնւում է օրէնքի պաշտպանութիւնը, ստորադրվելով միանգամայն Կայսրութեան մէջ գըրւած ընդհանուր կանոններին, հաւասար այլ նմանօրինակ ժողովների կամ կարգադրութիւններին։

§ 5. Ամենայն տնօրինողական գործողութիւնքը՝ Ընկերութեան գործերի մասին պատկանում են նորա Խորհրդին։

§ 6. Ընկերութիւնը ունի իւր կնիքը, վերնագրով „Կնիք Մարդասիրական Ընկերութեան, յանուն Ս. Գրիգորի, Լուսաւորչի Հայաստանի“։

§ 7. Եթէ ընկերութիւնը որպիսի և լցէ հանգամանքների պատճառաւ դադարեցնէ իւր գործողութիւնները, այն ժամանակ բոլոր մնացած դրամագլուխները՝ հիմնվելով Ընդհանուր ժողովի անդամների վճռի վերայ՝ գործ կդրվին այս Կանոնադրութեամբ որոշված ընկերութեան գործերի առարկաների համար։

§ 8. Սոյն Կանոնադրութեան ամեն մի փոփոխութիւնը կամ լրացուցումը թոյլատրվում է ոչ այլապէս, բայց միայն Տէրութեան վճռահատութեամբ, համեմատ Ընկերութեան միջնորդութեանը՝ որ հիմնված լինի նորա Ընդհանուր ժողովի կարգադրութեան վերայ։

## Գ Լ Ո Ւ Խ Բ.

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

### ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՅ

§ 9. Մարդասիրական Ընկերութիւնն, յանուն Ս. Գրիգորի կազմըվում է. Հիմնադիր Անդամներից, Պատուաւոր Անդամներից, Անփոփոխ Անդամներից և Տարեկան Անդամներից։

„ 10. Հիմնադիր Անդամները համարվում են ութ։ Պատուաւոր, Անփոփոխ, և Տարեկան Անդամների թիւը սահմանափակուած չէ։ Այս Անդամների կարգը կարող են մտնել այն ամենայն անձինք հայերից՝ որք գտնվում են Ռուսիոյ հպատակութեան տակ, առանց զանազանելու նոցա կոչումը, վիճակը և դաւանութիւնը։

§ 11. Հիմնադիր Անդամի կոչման հետ չեն միաւորվում նորանոր պարտաւորիչ դրամական նուիրաբերութիւններ յօգուտ Ընկերութեան։ Այս կոչումը կրելի է մինչև ցմահ։ Յետ մահուան Հիմնադիր անդամի, նորա կոչումը անցանում է ժառանգին կամ հանգուցելոյ



մերձաւոր ազգականին, նորա ցանկութեան՝ և նշանակութեան համեմատ։ Իսկ երբ որ ևէ պատճառաւ այս նշանակութիւնը չի կատարուէ այն ժամանակ Հիմնադիր Անդամի կոչումը ոչ ոքի չէ անցնում։

§ 12. Մնացեալ Անդամների կոչման հետ միաւորվում են դրամական կամ նիւթական նուիրաբերութիւններ յօգուտ Ընկերութեան հետևեալ չափով. Պատուաւոր Անդամները նուիրում են մէկ անգամով ամեն ժամանակի համար ոչ պակաս քան հազար ռուբլի։ Անփոփոխ Անդամները նուիրում են մէկ անգամով և ամեն ժամանակի համար ոչ պակաս քան հարիւր ռուբլի։ Տարեկան Անդամները նուիրում են իւրաքանչիւր տարի ոչ պակաս քան հինգ ռուբլի։

Պատուաւոր և անփոփոխ Անդամների կոչումը կրելի է մինչև ցմահ, իսկ Տարեկանները՝ պարտաւորիչ նուիրաբերութիւնների դադարման հետ՝ զրկվում են իւրեանց կոչումից։

§ 13. Ընկերութեան Անդամների ընդհանուր պարտաւորութիւններն են՝ նորա բարերարական գործողութիւնների զարգացմանը նպաստամատոյց լինել։

§ 14. Ընկերութեան Անդամները ստանում են հետևեալ իրաւունքները. ա. Նոքա ներկայ են գտնվում Ընկերութեան ժողովներումը, և Խորհրդի հրաւիրմամբը՝ նորա նիստերի մէջ մասնակից են լինում Խորհրդակցական ձայնի իրաւունքով. բ. Նոքա առաջարկում են Խորհրդին այն անձինքները՝ որք ցանկանում են Ընկերութեան Անդամների կարգը մտանել. և գ. Նոքա բանիւ կամ գրով յայտնում են իւրեանց կարծիքը ընկերութեան գործերի կարգադրութեան մասին։

§ 15. Ամեն Անդամներին՝ նոցա կոչման համար տրվում են վկայագիրք՝ Ընկերութեան Խորհրդի ստորագրութեամբը և կնքովը։

### 2 ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՒ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՎԵՐԱՅ

§ 16. Ընկերութեան պարապմանց շրջանի մէջ մտանող բոլոր գործերը կառավարում են նախ Հիմնադիրները և ապա Ընկերութեան Խորհուրդը և Ընդհանուր ժողովը. Հիմնադիրները կառավարում են Ընկերութեան գործերը մինչև այն ժամանակ միայն՝ որ Ընկերութեան կազմութեան մէջ մտանող անդամները քսան և հինգից պակաս լինին, և յետ այսորիկ հիմնադիրները գումարում են Ընդհանուր ժողով, որ և ընտրում է իւր միջից անձինքներ Խորհրդին մէջ նիստ ունենալու համար։

§ 17. Խորհուրդը բաղկանում է Նախագահից և ութ անդամներից, որք ընտրվում են երեք տարի ժամանակով։ Այս անձինքների ընտրութեան կարգը կախվում է Ընկերութեան Ընդհանուր Ժողովի Անդամների հայեցողութիւնից, սակայն այն պայմանով որ պարտաւորութիւնների առաջումը Խորհրդին մէջ անխուսափելապէս և մի միայն հիմնադիրներից՝ ոչ մի դէպքում թոյլ չտրվի։

Ծանօթութիւն։ Եթէ Ընկերութեան գործերի կառավարութիւնը, համաձայն այս կանոնադրութեան 3-դ յօդուածին, Բաթումից ուրիշ քաղաք փոխադրվի, այն ժամանակ Ընդհանուր Ժողովը որի վճռով կատարվում է այս փոխադրութիւնը, վճռում է նոյնպէս և այն խնդիրը՝ թէ հարկաւո՞ր է արդեօք թողուլ Խորհուրդը իւր առաջին կազմութեանը մէջ, կամ թէ հարկաւո՞ր է ընտրել նոր անձինքներ նորա մէջ նիստ ունենալու համար։ Վերջին դէպքում Խորհրդի Նախագահին և Անդամների ընտրութիւնը կատարվում է համաձայն այս Կանոնադրութեան կանոններին։

§ 18. Ընկերութեան Գանձապետի և Ատենադպրի պաշտօնները կատարում են Խորհրդի անդամներից նոքա՝ որք սորա համար կընտրվին Ընդհանուր Ժողովից։

§ 19. Խորհրդի իւրաքանչիւր նիստին առաջնորդում է Նախագահը. իսկ նորա բացակայ գտնված ժամանակին, Խորհրդի Անդամներից նա որ սորա համար կընտրվի իւր ընկերակիցների մեծ մասից։

§ 20. Նիստերի համար օրեր չեն որոշվում։ Ընկերութեան գործերի քննութեան համար ժամանակ նշանակելը՝ կախվում է Խորհրդի հայեցողութենէն։

§ 21. Խորհրդի մէջ բոլոր գործերը վճռվում են ձայների առաւելութեամբ։ Երբոր նոքա (ձայները) հաւասար լինին, Նախագահ եղողի ձայնը առաւելութիւն է տալիս այն կողմին՝ որի հետ համաձայն է նա։

§ 22. Խորհրդի կարգադրութիւնների հաստատականութեան համար՝ պահանջվում է որ նորա անդամները հինգից պակաս չլինին։

§ 23 Խորհրդի իւրաքանչիւր կարգադրութիւնը համառօտ գըրվում է առանձին օրագրական մատենի մէջ՝ որ առանձին ատենական քաղուածների տեղ է բռնում, և ստորագրվում է այն անդամներից՝ որք մասնակից են եղած գործի վճռվելուն։ Խորհրդի վճիռներում նշանակվում է՝ ա. ժամանակը, թէ երբ է եղած Խորհրդի նիստը. բ. առարկայն՝ որի վերայ եղած է Խորհրդի խորհրդածութիւնը. և գ. նոյն իսկ յայտնի խնդրի վճիռը որ ընդունված է Խորհրդի



Անդամների մեծ մասնովը։ Իսկ հիմունքները՝ ըստ որոց Խորհուրդը այս կամ այն կարգադրութիւնը արաւ, կարող են մնալ առանց բացատրութեան։

§ 24. Ընկերութեան գործերի համար թղթակցութիւնը մասնաւոր անձինքների հետ, որպէս և կառավարութեան ատեանների հետ, Խորհուրդը անում է իւր անունովը։

§ 25. Խորհրդի ազդեցութիւններից անկախ, ընկերութեան գործերի կառավարութեան մէջ մասնակից է լինում և Մարդասիրական Ընկերութեան Անդամների Ընդհանուր Ժողովը։

§ 26. Ընկերութեան Ընդհանուր Ժողովը տարին մի անգամ է լինում։ Նա գումարվում է Խորհրդի անօրէնութեամբ Յունվար ամսի մէջ, ձեռագիր հրաւիրաթղթով, որք յառաջուց ուղարկվում են Ընկերութեան Անդամներին։

§ 27. Ընկերութեան Ընդհանուր Ժողովը կազմվում է նոյն Ժողովից ընտրված անձնի Նախագահութեան ներքոյ, այն Անդամներից՝ որք կներկայանան ժողովումը։ Չներկայացող Անդամները չեն կարող դադարեցնել Ընդհանուր Ժողովի նիստերը և պարապմունքը։

§ 28. Ընդհանուր ժողովում, նորա մէջ Նախագահ եղողի առաջնորդութեան ներքոյ, քննվում են Ընկերութեան գործողութիւնները անց կացած տարւոյն մէջ, և կարգադրվում են, որչափ որ կարելի է, նորա գլխաւորութիւնները և գաղափարները ապագայ ժամանակի համար։ Ընդհանուր Ժողովը կարող չէ քննութեան ներքոյ ձգել այն առարկաները՝ որք չեն մտանում Ընկերութեան պարապմունքների շրջանի մէջ։

§ 29. Ընկերութեան արդէն կատարուած գործողութիւնների քննութեան ժամանակ՝ առանձին ուշադրութիւն է դարձուցանվում ընկերութեան գումարների կանոնաւոր պահպանութեան և գործածութեան վերայ։

§ 30. Ընդհանուր Ժողովի նիստերի ժամանակ, Ընկերութեան բոլոր Անդամները՝ առանց զանազանութեան՝ ունին հաւասար ձայն։ Ընդհանուր ժողովի մէջ գործերը քննվում են և վճռվում են այնպէս՝ ինչպէս որ և Ընկերութեան Խորհրդին մէջ։

§ 31. Ընդհանուր Ժողովի կարգադրութիւնները լինում են նոյն իսկ կարգով, զոր պահպանում է (§ 23) Խորհուրդը սոյն դիպուածում։ Ընդհանուր Ժողովի մէջ վճռված կարգադրութիւնները յանձնվում են Խորհրդին՝ կատարելու համար։

§ 32. Ընկերութեան Ընդհանուր Ժողովի կարգադրութիւնների

կատարումը՝ Խորհրդի անհրաժեշտ պարտականութիւնն է։ Խորհուրդը կարող չէ կատարումն տալ Ընդհանուր Ժողովի միայն այն կարգադրութիւններին, որք վերաբերվում են Ընկերութեան պարապմունքների սահմանից դուրս ելանող խնդիրներին։

Գ Լ Ո Ւ Խ Գ.

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ.

§ 33. Ընկերութեան գործունէութեան առարկաները վերաբերվում են աղքատ հայերի երկու սեռի պատանիների (տղայոց և աղջկանց) մէջ, ըստ չափու իւր կարողութեան՝ տարածել բարոյական և մտաւորական կրթութիւն, ևս և քրիստոնէական բարեգործութիւն նոցա (հայերի) չքաւոր անդամներին։

§ 34. Ընկերութեան յանձնուած պարապմունքների շրջանի մէջ՝ նա (Ընկերութիւնը) ներգործում է ի դէմս Խորհրդի, ըստ իւր հայեցողութեան՝ այն անձինքների ձեռօք, որոց լիակատար իրաւունք կտայ առ այն՝ իւր վստահութեամբը։

§ 35. Ընկերութիւնը հոգ տանելով Հայ պատանեաց մէջ կրթութիւն տարածելու՝ իւր խնամքի տակ ընդունում է այն ծնողների զաւակները, որք իւրեանց չքաւորութեան պատճառաւ կարող չեն տալ նոցա պատշաճաւոր դաստիարակութիւն. օգնում է վարժատուների մէջ արդէն դաստիարակվող պատանիներին՝ դպրոցական գրքերով, դրամական և այլ տեսակ նպաստներով. և նպաստում է ստորին դաստիարակողական ուսումնական վարժարաններում ուսման ընթացքը աւարտող աղքատ կարգի աշակերտներին՝ մտանել վերին կարգի ուսումնարաններ՝ համաձայն նոցա ծնողների և խնամակալների ցանկութեանը։

§ 36. Ընկերութիւնը բացի ի առանձին անձինքներին կրթութեան գործի մէջ արած օգնութիւններից. կարող է հիմնել և իւր սեփհական դպրոցները՝ խնդրելով սորա համար թոյլտուութիւն սահմանադրուած կարգով։

§ 37. Ընկերութիւնը իւր բարեգործութիւնը կարող է ցոյց տալ քրիստոնէական ողորմածութեան գործերի մէջ։ Այս հիման վերայ նա օգնում է աղքատներին և չքաւորներին դրամական նպաստներով, հիւանդներին՝ ձրի բժշկութեամբ, որոնելով և տալով օրէնքով թոյլ տրված պարապմունքներ՝ այն անձինքների, որք իւրեանց ապրուստի համար պատուաւոր եղանակով գործ չեն գտանում։



§ 38. Այնպիսի դիպուածներում՝ երբ որ Ընկերութիւնը հարկաւոր կհամարի օգնութիւն ցուցանել Հայ Գրիգորեան եկեղեցւոյ սրբազան և եկեղեցական պաշտօնեաների այրիներին և որբերին, որոց համար հաստատուած կան առանձին գանձանակներ Էջմիածնական վանքում և Հայ-Գրիգորեան ամեն վիճակներում,—այդ օգնութիւնները լինում են Ընկերութեան նպաստողութեամբ, առանց որպիսի և իցէ միջամտութեան և մասնակցութեան Հոգևոր տեսչութեան կողմից։ Այս նպաստների համար՝ իւրաքանչիւր անգամ հաղորդվում է Հոգևոր Իշխանութեան տեղեկութեանը, որ նա ևս կարողանայ աչքի առջև ունենալ այս՝ իւր կողմից նպաստներ նշանակելու ժամանակ։

§ 39. Քրիստոնէական բարեգործութեան գործերը, որք բացատրված են 37 և 38 յօդվածներում, տարածվում են Ընկերութեան հիմնադիրների ցանկութեան համաձայն, միայն այն աղքատների և կարօտ եղողների վերայ, որք գտանվում են նորա (Ընկերութեան գործերի կառավարութեան տեղում։

Գ Լ Ո Ւ Խ Դ.

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՆՈՑԱ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ։

§ 40. Ընկերութեան միջոցները են՝ ա. հիմնական մայր գումար, բաղկացած տասն հազար վեց հարիւր ռուբլից, որք նուիրվեցան Ընկերութեան հիմնադիրներից բարեգործական նպատակով. բ. տուրքեր Ընկերութեան անդամների՝ թէ միանգամ միայն տվածք և թէ տարեկանք. գ. դրամական նուէրներ՝ որք լինում են Ընկերութեան կազմածի չպատկանվող անձինքներից։ Վերջապէս դ. ստացուածքներ՝ թէ շարժականք ամեն տեսակի և թէ անշարժք (անբընակք), որք ընծայվում են մասնաւոր անձինքներից յօգուտ Ընկերութեան՝ կտակով՝ պարգևական դաշնագրով կամ ուրիշ վկայագրով։

§ 41. Անբնակ գետիններ, պարտէզներ և շէնքեր, որք բարեբար անձինքներից նուիրվում են Ընկերութեան, ընդունվում են ոչ այլապէս, եթէ ոչ Կովկասեան Փոխարքայի թոյլտուութեամբը։ Ընկերութիւնը՝ յօգուտ իւր ընծայուած ստացուածները ընդունելու ժամանակ ազատ է մնում կալուածագրի հարկերից։

§ 42. Ընկերութեան պատկանված՝ թէ դրամական և թէ

նիւթական բոլոր մայր գումարների համար, նոցա վատնութիւնից և անկանոն գործածութիւնից պահպանելու համար, պահվում են միշտ հաշիւներ՝ որք ճիշտ տեղեկութիւններ ցոյց են տալիս նոցա գոյութեան վերայ, նոցա շարժողութեան և առհասարակ բոլոր դարձուածքի վերայ։

§ 43. Այս հիման վերայ՝ Ընկերութեան բոլոր մայր գումարները իւրեանց ժամանակին գրվում են եկամուտքի մէջ և անցնվում են ելքի մէջ՝ ժապաւինեալ մատեաններում։ Այդ մատեանների ձևը Ընկերութիւնը ինքն է կարգաւորում։

§ 44. Նյումուտից մատեանների պահպանութեան և անգործածութեան կարգի, յօդուածները մատեանների մէջ անցնելու, ամսական և տարեկան մատեանները վերջացնելու համար պահվում են ըստ հնարաւորութեան այն կանոնները՝ որք ընդհանուր սահմանադրութեամբ նշանակված են կառավարչական տեղերի համար։

§ 45. Ընկերութեան պատկանեալ գումարներից ի պատրաստի պահվում է Գանձապետի մօտ այնքան՝ որքան Խորհրդի նկատողութեամբը հարկաւոր է ընթացական ծախքերի համար։ Յետ այսորիկ մնացած դրամական գումարները, որոց փութանակի գործ դրվելու հարկաւորութիւնը չէ երևում, կամ պահվում են տեղական Գանձարանում, առանձին արկղի մէջ, Ընկերութեան կնքով կնքված, կամ թէ տեղաւորվում են Ընկերութեան անունով, արքունական դրամանոցների մէկում, տոկոսիքով շահեցնելու համար. կամ թէ վերջապէս, փոխ են տրվում մասնաւոր անձինքների, ապահով գրաւներով, Խորհրդի անդամների անձնական պատասխանատուութեամբը իւրանց ժամանակին ճշտութեամբ՝ այդ փողերը վճարելու համար։ Ընկերութեան պատկանում է որոշել սոյն յօդուածիս մէջ ցուցված եղանակներից մինը դրամական գումարները պահպանելու և տեղաւորելու համար։ Իւրաքանչիւր պահանջողութիւնը արքունական դրամանոցից՝ ընկերութեան գումարների՝ հարկաւոր է որ ստորագրված լինի ոչ պակաս գոնէ Խորհրդի հինգ Անդամներից.

§ 46. Նիւթական կայքերը պահպանելու համար այնպիսի միջոցներ են գործ դրվում, որք աւելի հարմարաւոր կճանաչվին։ Եկամուտ բերող ստացուածքները վարձու են տրվում տնտեսական եղանակով, օգուտները ստանալու համար և Ընկերութեան գործերի վերայ գործ ածելու համար։

§ 47. Ընկերութեան սեպհականականութիւն եղող դրամագլուխները գործ են դրվում միայն այն առարկաների վերայ, որք մտանում



են նորա գործունէութեան շրջանի մէջ։ Խոտորվելը այս կանոնից՝ համարվում է քակտել օրէնքը, և ենկանում է պատասխանատուութեան տակ պատահած դիպուածներում, հանգամանքներին և օրէնքներին նայելով։

§ 48. Ընկերութիւնը ինքը տնօրինում է իւր դրամական և նիւթական ստացուածների գործադրութիւնը, ըստ իւր հայեցողութեան, բայց առանց ելանելու, նախընթաց յօդուածով նշանակուած սահմաններից։

§ 49. Ընկերութիւնը՝ իւր դրամական գումարները գործ ածելու ժամանակ, ամեն խնայողութիւնը պահում է նոցա ծախսի ժամանակ։ Այս նպատակով նա իւր բոլոր դրամագլուխները բաժանում է երկու կարգի. ա. դարձուածական, որոնք կարող են ի գործ դրվիլ ըստ նորա հայեցողութեանը ամենայն ժամանակ՝ նորա գործունէութեան առարկաների վերայ. բ. անմերձանալիք, որք կարող չեն յայտնի եղած միջոցի ընթացքում՝ որ կնշանակվի Ընկերութիւնից՝ ի գործ դրվիլ որ և իցէ հարկաւորութեանց վերայ։ Առաջին կարգի դրամագլուխներին վերաբերվում են. Ընկերութեան անդամների տարեկան դրամական տուրքերը, նորա ստացուածներից եղած եկամուտները և տոկոսիքները, որք կհաւաքվին Տէրութեան գանձարաններում՝ ընկերութեան տուրքերի դարձուածներից։ Դրամական գումարների երկրորդ կարգի վերաբերում են. Ընկերութեան հիմնադիրներից նորա օգտի համար ընծայված սկզբնական հիմնական դրամագլուխը, և պատուաւոր և անփոփոխ անդամների դրամական տուրքերը։

§ 50. Դրամական գումարների կամ նիւթական ստացուածքների ամեն մէկի գործադրութիւնը պիտոյ է որ ունենայ հաւատալի վկայութիւն թէ ծախսի մէջ նշանակված դրամները կամ իրերը հասած են հաշւէցուցակներում նշանակուած ստացողի ձեռքը։ Այս հիման վերայ դրամների և իրերի բոլոր դուրս դրվիլը կամ առաքվելը ընկերութեան դրամարկղից՝ հաւաստվում են պարտուպատշաճ ձեռնադրով, ստացագրով, դրաւոր ծանուցագրերով և յայտարարութիւններով։

## ԳԼՈՒԽ Ը.

### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՇԻՒՆԵՐԸ

§ 51. Ընկերութեան հաշիւները գրում են Նորա Խորհրդից խ-րաքանչիւր անցկացած տարւոյ համար։

§ 52. Ընկերութեան հաշիւները պարունակում են իւրեանց մէջ ա. այն ամենը ինչ որ կատարված է Ընկերութիւնից անց կացած տարւոյ մէջ՝ իւր գործունէութեան (§ 35-38) վերաբերեալ առար-կաների մասին. բ. տեղեկութիւնները՝ ընկերութեան դրամագլուխնե-րի վերայ։ Այս բաժնի մէջ՝ մի մի թւլերով ցոյց է տրվում անցկա-ցած տարւոյ մնացորդները. դրամական տուրքերը և ամեն տեսակ նուիրաբերութիւնները՝ որք մտած են հաշուական տարւոյ ընթաց-քում անդամներից և մասնաւոր բարերարողներից. ծախսերը՝ որք ի գործեն դրված հաշուական տարւոյ մէջ Ընկերութեան յայանի հար-կաւորութեանց վերայ. դրամական մնացորդները առաջիկայ տարւոյ. վերջապէս բացատրութիւնը՝ ուր և ինչպէս զետեղված են և պահ-վում են ընկերութեան դրամագլուխները, և գ. Ընկերութեան գի-տաւորութիւնները և առաջադրութիւնները ապագայ ժամանակի համար։

§ 53. Ընկերութեան այսպիսի եղանակով գրված հաշուէցուցակ-ները իւրաքանչիւր տարի տպվում են ի տեղեկութիւն հասարակաց „Կովկաս" լրագրի և ուրիշ հրատարակութեանց մէջ։ Այս հաշուէցու-ցակները ազատօրէն ենթարկվում են գրականութեան քննութեանը։

§ 54. Եթէ Ընկերութիւնը իւր միջոցների նկատողմամբ՝ հնա-րաւոր համարէ առանձին տպել հաշուէցուցակները՝ իւր բոլոր ան-դամներին բաժանելու համար, կարող է այդ անել ըստ իւր նկա-տողութեանը։

§ 55. Ընկերութիւնը ազատ է իւր հաշուէցուցակները Տէրու-թեան առեանների ներկայացնելուց։ Բայց առանձին նշանաւոր դէպքերում Ընկերութեան բոլոր գործերը կարող են՝ Կովկասեան Փոխարքայի թոյլտուութեամբը, բացվել Տէրութեան գործակալների առաջև։



Բագւի երկաթուղու կայարանը դրսի կողմից

## ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԱՐԴԻՒՆՔԻՑ ՎԵՐՑՆՈՂ ՏՈՒՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. *Դրամական գումարների արդիւնքից վերցնւում է տուրք հինգ տոկոս.—*

*ա) Պետական, հասարակական և ամեն մասնաւոր տոկոսաբեր թերթերից։*

*բ) Պետական, հասարակական, ընկերական բանկերի (*акціонерный*) և փոխադարձ վարկի ընկերութեան մէջ ընթացիկ հաշւով կամ տոկոսիքով պահեցնելու դրած գումարների արդիւնքից։*

*և գ) Կառավարութեան առջև ապահովւած երկաթուղիների ընկերութեանց տոկոսաբեր բաժնետոմսերից։*

2. *Երկաթուղիների չապահովւած բաժնետոմսերի արդիւնքից* 3 *տոկոս։*

## ԱԹԵՒՏՈՒՐԻ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԱՐԿ

*Ա. գիլդիայի վկայականը ամեն տեղ արժէ* 565 *ռ.*

*Բ.* „ „ *առաջին կարգի տեղերում արժէ՝* 120 *ռ., երկրորդ կարգի՝* 25 *ռ., երր. կարգի՝* 75 *ռ., չոր. կարգի* 55 *ռ. հինգեր. կարգի* 40 *ռուբլի։*

*Մանր առեւտրի վկայականը. ա. կարգի* 30 *ռ. բ. կարգի՝* 25 *ռ. գ. կարգի՝* 20 *ռ., դ. կարգի՝* 15 *ռ., ե. կարգի՝* 10 *ռ.։*

*Սայլերով առևտուր անողի վկայականը* 6 *ռ., շրջավաճառինը՝* 6 *ռ.,*

*Գործակատարների վկայականը. ա. կարգի՝* 35 *ռ. բ. կարգի՝* 6 *ռուբլի։*

*Անցագրի վկայականը՝ ա. գիլդի* 15 *ռ. բ.* 6 *ռ.։*

## ԱԹԵՒՏՐԱԿԱՆ և ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ ՎՃԱՐԵԼԻՔ ՀԱՐԿ (билетъ)։

*Ա. գիլդի վկայականների հետ առաջին կարգի տեղերի համար՝* 55 *ռ. երկրորդ կարգի՝* 45 *ռ., երր. կարգի* 35 *ռ., չորր. կարգի* 25 *ռ. և հինգ. կարգի* 20 *ռ., Բ. Գիլդի վկայականների հետ առաջին կարգի տեղերում* 35 *ռ.,* 2-*դ կարգի* 25 *ռ.,* 3-*դ կարգի* 20 *ռ.,* 4-*դ կար-գի* 15 *ռ.,* 5-*դ կարգի* 10 *ռ.։*

*Մանր առեւտրի վկայականներ, ա. կարգի* 10 *ռ. բ. կարգի* 8 *ռ., գ. կարգի* 6 *ռ., դ. կարգի* 4 *ռ., ե. կարգի* 2 *ռ.։*



## ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿ

*Առաջին դասակարգի* 10-*ից մինչև* 16 *բանւորների. ա. կար-գի* 30 *ռ. բ. կարգի* 25 *ռ. գ. կարգ.* 20 *ռ. դ. կարգի* 15 *ռ. ե. կարգի* 10 *ռ., Երկրորդ դասակարգի* 5-*ից* 9 *բանւորների. ա. կար-գի* 20 *ռ., բ. կարգի* 18 *ռ., գ. կարգի* 14 *ռ., դ. կարգի* 10. *ե. կար-գի* 7 *ռ.։ Երրորդ դասակարգի* 2-*ից* 4 *բանւորների. ա. կարգի* 10 *ռ., բ. կարգի* 9 *ռ. գ. կարգի* 7 *ռ. դ. կարգի* 5 *ռ. և ե. կարգի* 3 *ռ.։*

## *ՊԱՏԵՆՏԻ ՀԱՐԿ*

*Գինեվաճառների տուրքը քաղաքի բնակիչների համար առա-ջին կարգի* 300 *ռ. երկրորդ կարգի* 150 *ռ. երրորդ կարգի* 100 *ռ. բոլոր քաղաքի բնակիչների համար բացի սահմանած պատէնտի տուր-քից (* 30, 40 *և* 60 *ռուբլու արժողութեան) որոշւած է նաև մի* 100 *ռ. դասակարգ։ Քաղաքից դուրս ապրող բնակիչների համար* 100 *ռ.։*

*Տօնավաճառի տոմսեր և վկայականներ։ Առաջին կարգի տօնա-վաճառներում ա. գիլդիի բիլէթը* 100 *ռ. բ. կարգի գիլդիի* 25 *ռ., մանր առևտրի բիլէթը* 6 *ռ. գործակատարական վկ. առաջին կար.* 6 *ռ. բ. կարգի* 2 *ռ.։ Երկրորդ կարգի տօնավաճառներում, ա. գիլ-դիի* 50 *ռ. բ. գիլդիի* 12 *ռ.* 50 *կ. մանր առևտրի բիլէթը* 3 *ռ. գործակատարի վկայականը ա. կարգի* 3 *ռ. բ. կարգի* 1 *ռ. Երրորդ կարգի տօնավաճառներում ա. գիլդիի* 40 *ռ. բ. գիլդիի* 10 *ռ. մա-նր առևտրի բիլէթը* 2 *ռ. գործակատարական վկայականը ա. կար-գի* 2 *ռ. բ. կարգի* 75 *կ. Չորրորդ կարգի տօնավաճառներում ա. գիլդիի* 25 *ռ. բ. գիլդիի* 6 *ռ. մանր առևտրի բիլէթը* 1 *ռ.* 50 *կ. գործակատարական վկայականը ա. կարգի* 1 *ռ.* 50 *Բ. կարգի* 50 *կ։*

*Բացի արքունի հարկից առևտրական վկայաթղթերից վեր-ցնում է լրացուցիչ տոկոսի տուրք գիւղական և քաղաքային հաստա-տութեանց օգտին հետևեալ չափով—ա. և բ. գիլդիի վկայական-ներից* 15% *ոչ աւելի, և միւս ամեն վկայաթղթերից ոչ աւելի քան* 10%*։*

## ԴՐՈՇԱԳԱՒՈՐ ՀԱՐԿ ՏՈԿՈՍԱԲԵՐ ԹՂԹԵՐԻՑ.

1. Ռուսաց ամեն տեսակ առևտրական, արդիւնաբերական, վարկի և երկաթուղային ընկերութեանց բաժնետոմսերը, պարտաթղթերը և գրաւաթղթերը, գիւղային և քաղաքային հասարակութիւնների և այլ հասարակական հիմնարկութեանց արձակած պարտաթղթերը, ինչպէս, նաև օտարազգի ամեն տեսակ ֆօնդեր, բաժնետոմսեր, պարտաթղթեր և գրաւաթղթեր ենթարկվում են, իւրաքանչիւր հատորն առանձին, դրոշագաւոր հարկի հետևեալ չափով։

| | | |
|---|---|---|
| մինչև 50 ր. | | 15 կ. |
| „ 50-ից մինչև | 100 ռ. | 80 „ |
| „ 100 „ | 250 „ | 1 ռ. 25 „ |
| „ 250 „ | 500 „ | 2 „ — „ |
| „ 500 „ | 1000 „ | 3 „ — „ |
| „ 1000 „ | 2000 „ | 4 „ — „ |
| „ 2000 „ | 3000 „ | 5 „ — „ |
| „ 3000 „ | 4000 „ | 6 „ — „ |
| „ 4000 „ | 5000 „ | 7 „ — „ |
| „ 5000 „ | | 10 „ — „ |

2. Առաջին յօդւածում ցոյց տւած քանակութեամբ դրոշագաւոր տուրքը վերցնում է ռուսաց տոկոսաբեր թղթերից գործադրութեան մէջ մտնելու սկզբում, իսկ օտարազգի տոկոսաբեր թղթերից— երբ նոքա մուտք են գործում շրջաբերութեան համար կայսերութեան սահմաններում։

Դրոշագաւոր հարկը երկու տեսակ է սահմանւած. 1) հասարակ 80, 60, 15, 10 և 5 կոպէկի արժողութեամբ. և 2) համեմատական չափով ակտի գումարի համեմատ. ա. անձնական պարտքի պարտաւորութեամբ ակտերի համար և բ. այլ ունեցւածքով պայմանաւորւած ակտերի և դօկումէնտների համար։

80 կոպէկիանոց դրոշագաւոր հարկին ենթարկւում են. 1. մասնաւոր անձանց ատենական տեղերին և ձայտօնական անձերին մատուցած ամեն տեսակ խնդիրներ, յայտարարութիւններ, բողոքներ, պատասխաններ, հերքումներ, և այս թղթերի պատճէնները. 2. պաշտօնական անձերից և ատենական տեղերից տրւած որոշումների ու վճիռների պատճէններ, տեղեկութիւններ, վկայականներ, վաւերացումներ (удостовѣреніе), տրւած գիւղական, քաղաքական և համայնական հաստատութիւններից։ 3. Հաւատարմաթղթեր. 4.



կտակներ. 5. սահմանորոշական գրքեր մասնաւոր անձանց տւած. 6. պետական հաստատութիւններից ու պաշտօնական անձերից խնդրատուներին տւած յայտագիրներն ու յայտարարութիւնները նրանց խնդիրներին իբրև պատասխան։

50 ռուբլուց բարձր դօկումէնտները սրանք են. տան հաստատութեան և տիրապետութեան վկայաթղթերը, 2. յանձնարարականներ. 3. պահպանութեան և գրաւական թղթեր. 4. բաժնետոմսեր և պարտաթղթեր, ինչպէս նրանց գնելու, այնպէս և փոխարինելու ժամանակ. 5. քաղաքներում բնակարան վարձելու պայմանաթուղթը (առանց բնակարանների տետրի (кварт. книжка) բացառութեամբ), եթէ միայն վճարը 500 ռուբլուց աւելի է։ Վճարի հատուցման մասին մակագրութիւնը տուրքի չէ ենթարկւում. 6. 500 ռուբլուց ոչ պակաս պարտաւորական պայմանագրի յանձնելու մասին մակագրութիւնը։

80 Կոպէկի դրոշագաւոր տուրքի ենթարկւում են.—անցագրերը, անձնաւորութեան ներկայացնող բիլէտները և կարճատև բացակայութեան թղթերը։

15 կոպէկ դրոշագաւոր տուրքի ենթարկւում են.—50 ռուբլուց պակաս արժողութեամբ արձանագրութիւններն ու վաւերաթղթերը։

10 կոպէկ դրոշագաւոր տուրքի ենթարկւում են.—հոգևորականների անցագրերը, բիլէտները, կարճատև արձակուրդի վկայաթղթերը, մաքսատան ներկայացնող նակլադնօյները, 5 ռուբլուց աւելի գումարի ստացականները։

5 կոպէկիանոց դրոշագաւոր տուրքի ենթարկւում են.—1. ատենական տեղերի ստացականները՝ խնդիրների, փողի, վկայաթղթերի (դօկումէնտ) և այլն ստացման մասին. 2. 5 ռուբլուց վեր գումարի արձանագրութիւններն ու դօկումէնտները. 3. քաղաքացիների ու գիւղացիների ամսօրեայ արձակուրդի վկայաթղթերը, 4. 50 ռուբլուց պակաս գումարի ստացւածքի մասին արած կարգադրութիւնները, 5. 50 ռուբլուց պակաս գումարի պարտաւորական պայմանագիրն ուրիշին յանձնելու զաշնագիրը. 6. 50 ռուբլուց պակաս գումարի անձնական փոխարինութեան կարգադրութիւնները. 7. 5 ռուբլուց աւելի փող ստացման ստացականը 5 ռուբլուց պակաս՝ տուրքի չեն ենթարկւում, 8. 5 ռուբլուց աւելի գումարի, ապրանքի կամ այլ ստացւածքի ստացումն ապահովող հաշիւները։

Տուգանք դրոշագաւոր հարկ չվճարելու կամ պակաս գնով դրոշագաւոր թուղթ գործադրելու դէպքում՝ որոշւած է տասնապատիկ

աւելի քան չգործադրած կամ պակաս գնով թերթերի արժէքը։

Դրոշմաթղթի տուրքից ազատ են հետեւեալ տեսակ խնդիրներն ու այլ թղթերը.—1. քրէական. 2. զինուորագրութեան. 3. գանձարանին հասանելի տուրքը վերադարձնելու մասին 4. գիւղացիների կեանքի եւ նոցա հասարակական կառավարութեան շինութեան վերաբերեալ գործերի մասին. 5. դպրոցական գործերի. 6. արքունի բանկի եւ նորա բաժանմունքների. 7. հասարակական ախրապետութեան տակ գտնուող հողերի սահմանաչափութեան. 8. պարտատէրերի ժողովի (КОНКУРСЪ). 9. Թոշակ ստանալու խնդիրներն ու այն ստանալու յանձնարարականները. 10. ծառաների հաշիւները տնային ծախսերի մասին. 11. փոստային վարչութեանը տրուող խնդիրներն ու յայտարարութիւնները. 12. երդուեալ ատենակալներին տուած բժշկական վկայականները. 13. բարձրագոյն մատուցած խնդիրներն. 14. վարչական անձանց բողոքներն գաւառները քննութեան գնացած ժամանակ. 15. վկայած չքաւորներ, 16. պետական ակնուակալական հողային բանկի՝ փոխատուներին տուած պարտաւորական ստորագրութիւններ։

Լրացուցիչ օրէնքներ դրոշմաթղթի տուրքի մասին։ Նոտարական արձանագրութիւնների նոցա կատարած տեղը տուրք առնելը տեղի է ունենում դրոշմաթղթի գների մասին 1874 թուի ապրիլի 27-ին բարձրագոյն հաստատուած ցուցակի կրկնապատիկ արժէքով։

## ՍՏԱՑՈՒԱԾՔԻ ՄԷԿԻՑ ՄԻՒՍԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՐԿԸ

1. Հաստատման հարկ։ Ստացուածքի մէկից միւսի ձեռքն անցնելիս որպէս կատարեալ սեփականութիւն, վաճառատուութեան եղանակով, այս փոխադրութիւնը հաստատող արձանագրութիւններից վերցնում է հաստատման հարկ կալուածքի գնահատութեան արժէքի 4% չափով։ Առանձին գներ են որոշուած զանազան տեսակ կալուածքների համար, որոնցից ցածր չեն կարող հաստատման կուպչէայի մէջ մտնել, թէպէտ եւ կալուածքը արդարեւ որոշուած գներից պակաս գնով լինի վաճառուած։

2. Զիջարար մէկից միւսն անցնող ստացուածքից վերցնուող հարկը։ Այն ստացուածքը, որ թէ ժառանգութեան (օրէնքի կամ կտակի եւ կամ անժառանգութեան իրաւունքի զօրութեամբ) եւ թէ Ամենաողորմածաբար ընծայման եւ այլ Զիջարար արձանագրութիւններով անցնում է մէկից միւս անձին, հարկի են ենթարկւում, հետեւեալ



օրէնքների զօրութեամբ։ Հարկից ազատ են համարւում.—1. այն կալուածքները, որոնց գինը 1000 ռուբլուց աւելի չէ, 2. գիւղացուն սահմանորոշ եղանակով յանձնած գետինը իր վերայի բոլոր շինութիւններով երբ նա անցնում է նոյնպէս գիւղացու ձեռքը. 3. այն կալուածքները, որոնք անցնում են յօգուտ գանձարանի, բարեգործական, գիտնական կամ դպրոցական հաստատութեանց, եկեղեցիներին, վանքերին եւ եկեղեցու միաբանութեան եւ 4. տան շարժական կայքը (բացի դրամական գումարներից), որ արդիւնք չէ բերում եւ ժառանգութիւն թողնող անձի առեւտրի կամ արդիւնաբերութեան առարկան չէ։ Հարկը վերցնւում է հետեւեալ քանակութեամբ.—1. այն ստացուածքներից, որոնք մի ամուսնուց միւսին, ուղիղ գծով շառաւիղող ազգականներին, որդեգիրներին եւ որդւոց կանանց—1% չափով. 2. այն ստացուածքներից, որոնք անցնում են խորթ որդուն ու խորթ աղջկան, եղբայրներին եւ քոյրերին (ինչպէս հարազատ, նոյնպէս եւ համահայր ու համամայր) եւ մեռած եղբայրների ու քոյրերի որդւոց 4%. 3. այն ստացուածքներից, որոնք բացի վերոյիշեալ 2-դ կէտում յիշուած ազգականներից անցնում են ուրիշ ազգականներին կողքի երրորդ աստիճանի, նոյնպէս եւ չորրորդ շառաւիղի ազգականներին—6% չափով 5. այն ստացուածքներից, որոնք անցնում են սոյն յօդուածի (3) 1—3 կէտերում յիշուած անձանց—8% չափով։

Ժառանգութեան ստացուածքի գնահատութիւնից ազատ են հետեւեալ դրամները. 1. ծառայողների ռոճիկները, բանւորների վարձը. ժառանգութիւն թողնող անձի մահամերձ հիւանդութեան ժամանակ տուած բժշկական օգնութեան համար տուելիք վարձատրութիւնը եւ խնամատարութեան վարձը, որոնք տակաւին հատուցած չեն լինում մինչեւ մահուան ժամը. 2. նոյն անձի թաղման ծախսը. 3. մինչեւ ժառանգութեան յայտնելը դիզուած արքունի, քաղաքային, գիւղական ու հասարակական տուրքերի ապառիկները, 4. վարկային հաստատութեանց կանոնների համաձայն ապահոված պարտքերը, նոյնպէս եւ գրաւականով ապահոված (մինչեւ ժառանգութեան յայտնելը) դրամագլուխը իր աճած տոկոսիքով. 5. ժառանգութիւնը թողնող անձի պարտքերը մուրհակագրով եւ ուրիշ պարտաւորագրերով. եւ 6. այն պարտքերը, որոնք ապացուցած են օրինաւոր պահուած առեւտրական գրքերով։

## ՄՈՒՐՀԱԿ

Մուրհակով պարտաւորուել չեն կարող 1. հոգեւոր կոչումի անձինք ամեն դաւանութեան. 2. անչափահաս կալուածք չունեցող գիւղացիք, եթէ առևտրական վկայական չունեին վերցրած. 3. զինուորական ամեն դասակարգի ստորին աստիճանի անձինք, որոնք գտնւում են զինուորական խմբական ծառայութեան մէջ։ 4. Պսակուած կանայք և օրիորդներ, որոնք ծնողներից չեն բաժանուած, թէպէտև լինին չափահաս, իրաւունք չունեին մուրհակագրով պարտաւորուել. սակայն եթէ կինը առևտրական հաստատութիւն կամ գործ ունի իր անունով, նա կարող է առանց մարդու համաձայնութեան մուրհակագիր տալ։ Վերը յիշուած անձերից որ և է մէկի տուած մուրհակները՝ չեն ընդունւում իբրև մուրհակ, բայց դատարանի նկատողութեամբ կարող են պարտաւորագրի նշանակութիւն ունենալ։ Այն անչափահասը, որ մուրհակը տալիս իրան չափահաս է անւանում, պարտքը վճարելուց չէ ազատւում։ Յառաջարկ տուած մուրհակները պէտք է առաջարկւին վճարման համար՝ 12 ամսուայ ընթացքում գրելու օրւանից։ Պայմանաժամն անցնում է.—այս ինչ թւից այսքան օրով կամ ամսով գրած մուրհակների համար—վերջին օրը անցնելուց յետոյ, այն մուրհակների համար, որոնց վճարումը նշանակւած է տօնավաճառում—տօնավաճառի վերջանալու համար որոշւած օրուայ նախընթաց օրը, կամ նոյն իսկ տօնավաճառի փակւելու օրը, եթէ դա միայն մի օր է տևում. այն մուրհակների համար, որոնց վճարումը սովորական պայմանաժամով է լինում —ստացման ծանուցումից 15 օր անց է։ Թոյլ է տրւած այսպէս ասած երկարաձգումը—(բողոքից) երեք օր այն մուրհակների համար, որոնք տրւած են ցպահանջ, և 10 օր—այնպիսիների համար, որոնք որոշեալ պայմանաժամով են տրւած։ Եթէ վճարման պայմանաժամը կամ վերջին օրը տօն կամ ոչ առէնական օր է գալիս, կամ հրէից համար շաբաթ օրը՝ այդ դէպքում նա յետաձգւում է, բայց միայն մինչև միւս օրը։ Վճարել չկարողանալու դէպքում ստորագրողը այդ մասին յայտնում է և նորան տրվում է միօրեայ միջոց յայտնելուց յետոյ։ Չը վճարւած մուրհակը պէտք է նօտարին ներկայացնել բողոքելու։

Մուրհակը իր ոյժը կորցնում է հետևեալ դէպքերում 1. Եթէ ցպահանջ մուրհակը չբողոքւի մի տարւայ ընթացքում, հաշւելով մուհակի թւի հետևեալ օրւանից. 2. պայմանաժամով կամ նոյնպէս ցպահանջ մուրհակը, երբ բողոքելուց յետ երկու տարւայ ընթացքում չառաջարկւի վճարման համար։ Երկու դէպքումն էլ մուրհակը պահպանում է իր նշանակութիւնը որպէս հասարակ պարտքի պարտաւորագիր տասն տարւայ ընթացքում։



## ՆՕՏԱՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԸ

| | | ռ. | կ. |
|---|---|---|---|
| 1. | Նօտարական արձանագրութիւնների կազմութեան համար | ռ. | կ. |
| | մինչև 500 ռուբլի գումարի . . . . | 2 | — |
| | 500-ից 1000 ռուբլի. . . . . . | 3 | — |
| | 1000 ռուբլուց վեր . . . . . . | 4 | — |
| | և բացի դոցանից 10 կոպ. (100 ռուբլուց) արձանագրութեան գնից։ | | |
| 2. | Պարտաւորագրերի մուրհակների վաւերացման և նոցա բողոքման համար. | | |
| | Մինչև 500 ռ. . . . . . . | — | 50 |
| | 500-ից բարձր. . . . . . . | 1 | — |
| | և բացի դորանից 10 կ. (100 ռ.) գումարից | | |
| 3։ | Պայմանագրերի վաւերացման համար. | | |
| | Մինչև 500 ռ. . . . . . . | 1 | — |
| | 501—1000 ռ. . . . . . . | 1 | 50 |
| | 1000 ռ. բարձր . . . . . . | 2 | — |
| | և բացի դոցանից 10 կ. (100 ռ.) արձանագ. գնից | | |
| 4 | Այն արձանագրութիւնների ու պաշնագրերի կազմութեան և վաւերացման համար, որոնց առարկաների գումարը չի կարելի որոշել—վերցնւում է 1000 ռ. արձանագրութեանց գինը։ | | |
| 5 | Պատճէնի ցուցութիւնը վաւերացնելու համար առաջին թերթերից. . . . | — | 25 |
| | հետևեալ թերթերից, երեսը 25 տող հաշւելով իւրաքանչիւրից. . . . | — | 10 |
| 6 | Ստորագրութիւնը վաւերացնելու համար ստորագրութ. համար . . . . | — | 10 |
| 7 | Հաւատարմագրեր վաւերացնելու (հաշտարար դատարանների և միջնորդական պարտաւորագրերի համար) | | |
| | Մէկ թերթին . . . . | 1 | — |
| | Եթէ մի քանի թերթ է | | |
| | Առաջին թերթը . . . | 1 | — |
| | Հետևեալ թերթից ամեն մէկը. . . | — | 50 |
| 8 | Փաստաթղթերի ներկայացնելու ժամանակը վաւերացնելու համար . . . . | — | 25 |

9 Արձանագրութիւնների գրքում զանազան թղթեր անցկացնելու համար, նոյն գրքի տողին . . 2 —

10 Արքունի գանձարանից թոշակ ստացող անձի կենդանի լինելը վաւերացնելու համար

Մինչև 30 ռ. տարին . . . — 3

31-ից 100 ռ. . . . . . — 10

300-ից վեր. . . . . — 20

բացի թոշակից ուրիշ ամեն դէպքերի համար . — 50

11 Մէկ անձինց միւսին տուլիք ծանուցագիրը պատրաստելու և առ այն վաւերագիր տալու համար -- 50

12 Նոտարին տուելիք վաւերաթղթի մէջ հակառակ կողմի ասածները մտցնելու համար . . — 50

13 Փաստաթղթեր պահպանելու համար, բացի դրամական և զանազան տեսակ թղթերից, իւրաքանչիւր փաստաթղթի համար . . . . — 25

Ծրարում փակուածի համար ամսական իւրաքանչիւր — 50

վճարը 6 ամսականը առաջ է տրւում։

14 Արձանագրութեան և վաւերաթղթի կատարման կամ վաւերացման ժամանակի մասին քաղուածքի կամ գրաւոր վկայութեան համար. . . . . — 50

15 Կրկին քաղուածք տալու համար, իւրաքանչիւր տողին . 1 —

Նոտարի գրասենեակից դուրս կատարուող գործողութ. համար. Մայրաքաղաքներում . . 3 —

Նահանգական քաղաքներում . . . 2 —

Գաւառներում . . . 1 —

Քաղաքի գծից դուրս իւրաքանչիւր վերստի համար . — 10

Երկաթուղով գնալու դէպքում երկրորդ կարգի վճար.

Երթեւլս ժամանակի կորուստի փոխարէն վարձ մայրաքաղաքներից

Նահանգական քաղաքները. . . 3 —

Ուրիշ տեղեր. . . . . 2 —

Եթէ միայն այս ուղևորութիւնը մի օրից աւելի չի լինելու։



# ՉԱՓԵՐ, ԿՇԻՌՆԵՐ ԵՒ ԴՐԱՄՆԵՐ

Ռուբլու համեմատական արժէքը

| Տէրութիւններ | Դրամներին անուններ | ռուսական |
|---|---|---|
| | | ռուբլի |
| Աւստրիա . . . . | 1 գուլդէն=100 կրէյցէր= | 0,61741 |
| Անգլիա . . . . | 1 ֆունտ ստերլինգ= | 6,30682 |
| | 20 շիլլինգ= | 0,3153 |
| | 12 պէնս= | 0,02626 |
| Գերմանիա . . . . | 1 մարկ=100 պֆէնինգ= | 0,3087 |
| Միացեալ Նահանգներ | 1 դոլլար=100 ցէնդ= | 1,2959 |
| Տաճկաստան . . . | 1 պիաստր=40 փարա= . | 0,055 |
| Ֆրանսիա . . . . | 1 ֆրանկ=100 սանտիմ= | 0,25005 |

1885 թուի դեկտեմբերի 17-ի բարձրագոյն հաստատած Նոր կանոններով ռուբլիական հաշուի վերաբերութեամբ մեզ մօտ առաջուանի պէս ռուբլիական միութիւն համարւում է արծաթէ ռուբլին 4 մսխալ 21 դոլեա մաքուր կշռով. այնուհետև ռուբլին ընդհանրապէս բաժանւում է —ոսկէ—իմպէրիալի (10 ռուբլի) և պօլիմպէրիալի (5 ռուբլի) և արծաթէ—ռուբլու 50 կոպէկանոցի, 25 կոպէկանոցի, 20, 15, 10 և 5 կոպէկանոցների։ Իմպէրիալը պէտք է ունենայ 2 մսխալ $69^{36}/_{100}$ դոլեա մաքուր ոսկի, իսկ պօլուիմպէրիալը 1 մսխալ $346^{68}/_{100}$ դոլեա։ Հին պօլուիմպէրիալը ունէր 1 մսխալ և 30 դոլեա և արժէր 5 ռ. 15 կ. 25 կոպէկանոցից վեր ոսկի և արծաթ դրամը պէտք է պարունակէ իր մէջ $^{9}/_{10}$ ոսկի կամ արծաթ և $^{1}/_{10}$ պղինձ. այսինքն ոսկէ դրամի փորձը առաջուան 93-ի փոխարէն կլինի 86, իսկ արծաթինը՝ առաջուան 84-ի փոխարէն՝ 86.

## ԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ

Ռուսական՝ 1 վերստը=500 սաժ.=1,500 արշ.=3,500 ոտնաչափ.

1 արշ.=$2^{1}/_{3}$ ոտն=16 վերշ.=28 դիւյմ.

1 ոտն.=12 մատն.=120 գիծ.

1 մատն.=$^{4}/_{7}$ վերշ.=17 գիծ.

## ՄԱԿԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՉԱՓԵՐ

Ռուսաստան՝ 1 դեսետինը=2,400 քառ. սաժ։ 1 քառ. սաժ.= 9 քառ. արշ 49 քառ. ոտն.։

Անգլիա՝ 1 ակրը 4,840 քառ. եարդըն։ 1 քառ. եարդը=9 քառ. ոտն.

Ֆրանսիա՝ 1 հէկտարը=100 արամ=10,000 մետրին։

Գերմանիա՝ 1 մորգէն=180 րուտին։

Աւստրիա՝ 1 իօխը=1,600 կլաֆտերին.

## ԾԱՒԱԼՆԵՐԻ ՉԱՓԵՐ

Ռուսաստան՝ 1 խոր. սաժ.=27 քառ. արշ.=343 խոր. ոտն. =592704 քառ. մատն.=110592 խոր. վերշ.=9;712145 խոր. մետրը.=12,703 խոր. եարդ։

1 խոր. արշ.=4096 խոր. վերշ.=12,703 խոր. ոտն.=21,952 խոր. մատն.=0,359709 խոր. մետր.=0,47059 խոր. եարդ։

1 խոր. ոտն.=1,728 խոր. մատն։=0,028315 խոր. մետր.=0,037 խոր. եարդ.=322,42562 խոր. վերշ.=0,0782 խոր. արշ.=0,00291 խոր. սաժ. 1 խոր. մատն.=1,000 խոր. գիծ=16386,163 խոր. միլլիմէտր։

1 խոր. մետր.=0,1029638 խոր. սաժ,=35,31659 խոր. ոտն. =61027,09 խոր. մատն.=2,78002 խոր. արշ.=11386,982 խոր. վերշ.=1308077 խոր. եարդ.

## ԴԵՂԱՑԱՆ ՉԱՓԵՐ

Դեղատան գովանքան հաւասար է 12 ունցիացին (84 մսխալ). 1 ունցիան=8 դրախմին=24 սկրուպուլին=480 գրանին=7 առեւտրական գրւանքի մսխալին. 1 դրախմը=3 սկրուպոլին=60 գրանին. 1 սկրուպուլը=20 գրանին։



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐ
Гос. Публ. Библиот.
ССР

Լոյս են տեսել

Օրացոյցներ 1891 թուականի.

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| 1. Ծոցի . . . . | | 5 |
| 2. Նոյնը ընտիր թղթի վրայ. . . | | 20 |
| 2. Գրպանի պատկերազարդ. . . | | 15 |
| 4. Նոյնը ընտիր թղթի վրայ. . . | „ | 50 |
| 5. Մեծադիր պատկերազարդ սեղանի, լիակատար շատ կարեւոր տեղեկութիւններով . . | „ | 30 |
| 6. Նոյնը ընտիր թղթի վրայ . . . | 1 | |
| 7. Կանանց համար յատկապէս, կարեւոր յաւելուածներով Կանանց Ընկ. Կանոնադրութիւններով | „ | 40 |
| 8. Նոյնը ընտիր թղթի վրայ . . | 1 | „ |
| 9. Պատի—հատուածական . . . | „ | 50 |
| 10. Պատի—տախտակ օրացոյց | | |

Բոլոր հրատարակութիւններից մի-մի օրինակ գնողը ճանապարհածախս չէ վճարում:

Դիմել՝ Тифлисъ. Контора Ред. „Агбюръ".

0022510 2 013
533b
2 001
NL0022510